

Ա. Ա. Սահակյան

Մծուրք մայրաքաղաքը և պատմիչ Մարաբ Մծուրնացին

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ.Հ. Աբրահամյանի կողմից 22/XI 2011)

Առանցքային բառեր՝ Արշակունյան Հայք, առաջին մայրաքաղաք,
Սանատրուկ թագավոր, Վաղարշ Երկրորդ, առաջին պատմագիրը Հայոց

Մծուրքը Մեծ Հայքի մայրաքաղաքներից է Տաքունի գավառում: Այն եղել է Հայոց Արշակունիների առաջին նստավայրը I դարի II կեսից մինչև Վաղարշ թագավորի նոր մայրաքաղաքը՝ Վաղարշապատը, II դ. վերջին: I դարում, երբ թե՛ ավերված լինելու պատճառով, թե՛ անվտանգության նկատառումներով Արտաշատը չէր կարող խաղալ նախկին դերը, պարթև Արշակունիները հայկական գահանիստ քաղաք պետք է ընտրեին հնարավորինս իրենց տերությանը մոտիկ՝ Հայքի հարավային սահմանին: Մծուրք (Մսուր) անունը աքքադերեն նշանակում է սահմանային, սահմանից անդին ([1], էջ 157), այսինքն՝ հարավցիների տեսանկյունից՝ միջագետքյան սահմանից դուրս՝ այն կողմ, տվյալ դեպքում՝ Հայաստանում: Հետագայում, երբ հայոց գահը դառնում է տեղական Արշակունիների ժառանգությունը, վերջիններս հայկական քաղաքական շահի թելադրմամբ մայրաքաղաքը վերադարձնում են Արարատյան դաշտ՝ Վաղարշապատ, Արտաշատ, Դվին, նորից Վաղարշապատ և այլն: Ցավոք, մայրաքաղաք Մծուրնը հանիրավի անտեսվել է տեղեկատվական բնույթի գրականության մեջ՝ համարվելով Սանատրուկի արքայանիստ քաղաք կամ նրա նստավայրերից մեկը (տե՛ս [2], հ. 7, էջ 638 (Մծուրն); հ. 10, էջ 176 (Սանատրուկ)): 3. Մարկվարտն ու Հ. Մանանդյանը Արշակունիներին են վերագրել նրա հիմնադրումը, իսկ Պ. Անանյանն ու Գ. Աբգարյանը Մծուրնը համարել են մայրաքաղաք:

Այնուամենայնիվ, պետք է ի մի բերել բոլոր դիտարկումները և նորովի կարևորել Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Սեբեոսի տվյալները:

Միայն Փավստոսը գիտի, որ Մծուրքը տարբեր է Մծբնից և, իբր, շինված է Սանատրուկ արքայի կողմից Եփրատի (Արածանի) և նրա ձախ վտակի (Մեղրագետ) գետախառնուրդում (Փավստոս Բուզանդ, IV, գլ. ԺԴ): Հավանաբար լքվել ու անբնակ է դարձել արդեն IV-V դդ. ընթացքում՝ 363 թ. Շապուհի ավերիչ արշավանքի հետևանքով, ինչպես նկատել են Հ. Մանանդյանը և Պ. Անանյանը: Մովսես Խորենացին և Սեբեոսն այդ քաղաքը չգիտեն և նրա անունը շփոթում են Մծբնի հետ: Այն, ինչ հայտնի էր Մծուրքի մասին, Մ. Խորենացին վերագրել է Մծբնին: Այսինքն, ըստ Մ. Խորենացու, Մծուրքի փոխարեն առաջին մայրաքաղաքը Արշակունիների օրոք եղել է Մծբինը, Մծուրքի երկրաշարժը եղել է Մծբին քաղաքում, և նրա վերաշինողն էլ դարձել է Սանատրուկը (Մ. Խ., II, գլ. ԼԶ) և ոչ թե հիմնադիրը, ինչպես գրում է Փավստոսը: Չէ՞ որ քաղաքը վաղուց կար և մայրաքաղաք հռչակվեց առաջին Արշակունի թագավոր Տրյատի կողմից: Խորենացին ստիպված է երկու օտար քաղաք հռչակել Հայոց մայրաքաղաք. նախ Մծբինը՝ Վաղարշակի օրոք, ապա Եդեսիան՝ Աբգարի օրոք, որից հետո մայրաքաղաքը տեսնում ենք Հայաստանում՝ Սանատրուկի օրոք: Բայց առանց անունը տալու, որովհետև Խորենացին գրում է. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. Քանգի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիա, և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս» (Մովսես Խորենացի, II, ԼԴ): Հետագա շարադրանքից է երևում, որ մայրաքաղաքը մնում է նախկինը՝ Արմավիրը (Մովսես Խորենացի, II, ԼԹ), որին էլ հաջորդում է Երվանդաշատը, որից հետո խոսվում է Արտաշատի հիմնադրման մասին:

Իրականում, եթե բազմազգ Եդեսիան, որպես Հայոց մայրաքաղաք և Աբգար արքայի նստավայր, ծրագրային էր Մ. Խորենացու համար, որովհետև առաջին քրիստոնյա արքա Աբգարը իշխում էր, ըստ նրա, Հայաստանում, հետևաբար այնտեղ էր նաև մայրաքաղաքը, ապա Մծբինը, որպես Հայոց մայրաքաղաք, ծրագրային արժեք չունի և հատկապես շփոթելու արդյունք է: Հայագիտության մեջ արդեն ընդունված փաստ է, թե ինչպես է զրչության ընթացքում Մծուրնը շփոթվել Մծբնի հետ ([3], էջ 147-153, ինչպես նաև ծան. 9, 52), իսկ Ն. Ակինյանի և այլ բանասերների կարծիքները տե՛ս ([4], էջ 194, ծան. 9, էջ 203-204, ծան. 52): Եթե Մ. Խորենացին իմանար, որ Մծուրնը Վաղարշակի նստավայրն է, միևնույն է, Աբգարին պիտի գտնեինք իր

տեղում՝ Եդեսիայում, որից հետո Սանատրուկը գահը պիտի նորից վերադարձներ Մծուրն, ինչից ոչ մի հայեցակարգային փոփոխություն չէր լինի։ Ավելին, պատմահայրը ստիպված չէր լինի հորինել երկու Մծբնապատում՝ հիմնվելով միայն անունների ստուգաբանման հայտնի ժողովրդական մեթոդի վրա։ Առաջինն այն է, որ Վաղարշակ արքայի պատվիրակն ասորի է, դրա համար էլ կոչվում է Մար (=Տեր) Աբաս, որը վաղուց կործանված Նինվեի չեղած արխիվից գտնում է Ալեքսանդր Մսկեդոնացու պատվերով քաղդեերենից հունարենի թարգմանված մատյան, որից քաղում է հայկական նյութերը և երկու լեզվով՝ հունարեն ու ասորերեն, ներկայացնում է Վաղարշակի ուշադրությանը, որն էլ որոշ բաներ արձանագրել է տալիս։ Փաստորեն ստացվում է, որ Հայոց նախնական պատմության քաղագրողը մծբնացի ասորի է, դրա համար էլ պատմահայրը նախընտրել է նրան կոչել ոչ թե փիլիսոփա, ինչպես Սեբեոսը, այլ Կատինա, որը հեշտորեն առաջ է եկել Կատիպա (= դպիր, գրագիր) բառի աղավաղման արդյունքում, ինչպես նշել է Պ. Անանեանը ([5], էջ 50-51)։ Էլ չասած, որ Մար Աբաս անունը բացակայում է ասորական անվանացանկերում, դրա համար էլ Մ. Խորենացու «Պատմության» ձեռագրերի զգալի մասում գրիչներն այն մոտեցրել են իրական ասորական Մարիբասին։ Այդ անվամբ հայտնի է նաև VI դարի ասորական մի «Ժամանակագրության» հեղինակ [6]։

Մյուս մծբնապատումը, որ ենթադրում է Մ. Խորենացին, բխում է Մծբին անվան հայկական գրչական ու արտասանական մի տարբերակից՝ Մծուին, որն էլ, հավանաբար, Խորենացու կողմից դարձյալ ժողովրդական ստուգաբանական եղանակով բացատրվել է հայերենի հիման վրա։ Մրծուին<Մրծուեն, որ նշանակում է մեկ բեկոր, դրամածվեն։ Այդպես հին և միջնադարյան Հայաստանում կարող էր կոչվել մետաղադրամից հատված տասնորդական մասը։ Ահա, հավանաբար, այս իմաստը համադրելով Մծբին քաղաքի մի անդրու հետ, որի ձեռքին ի ցույց էր դրված մեկ դրամ, պատմահայրը համարել է, որ արձանագործը պատկերել է Սանատրուկ արքային, որն իր ողջ գանձարանն իբր ծախսել է երկրաշարժից ավերված Մծբինը վերաշինելու համար, և իրեն մնացել է միայն մի ծվեն, որից էլ ենթադրվում է, որ առաջացել է քաղաքի անվանումը՝ Մրծուին։ Իրականում, Սանատրուկը վերաշինել է Մծուրն քաղաքը Տարոնում։ Ի դեպ, քանի առիթը ներկայացել է, արժե նշել նաև մի ստուգաբանական լեզենդ, որ օգտագործել է Մ. Խորենացին Սանատրուկ անունը բացատրելիս՝ իբր Սանոտի տված։

Սանատրուկի դայակ Սանոտը, որ Բյուրատ Բագրատունու քույրն է և Խոսրեն Արծրունու կինը, երեխայի հետ ընկնում է ձնաքթի մեջ և երեք օր ու գիշեր, ձյան մեջ թաղված, նրան պահում իր ստինքների տաքությամբ, մինչև ձնածածկույթի տակից նրանց դուրս է բերում «...կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուծոցն առաքեալ» (Մ. Խ., II, ԼԶ): Լույս աշխարհ ելնելու հրաշքն առնչվում է Սանատրուկ անվան գիտական ստուգաբանությանն՝ ըստ իրանագետ Ա. Փերիխանյանի (Sanat-ruk = բարձրացող լույս, այլն՝ լուսաբեր, կամ էլ, առասպելի տեսակետից հավանական է՝ ծագող առավոտ՝ որպես աստվածներից մեկի մականուն) ([7], էջ 81-82): Որքան էլ պատմահայրը Սանատրուկի անձը գրեթե խճճել է առասպելական ու մտացածին սյուժեների մեջ՝ փորձելով նրա գործերն արհեստական ձևով կապել Մծբնի հետ, իսկ անունը ստուգաբանել հայերեն, միննույն է, պատմական Սանատրուկը մեկընդմիջտ կապված է Մծուրնի վերաշինման, ինչպես վկայում է Փավստոսը, և վաղ քրիստոնյաների հալածանքների հետ, ինչպես վկայում է Սանդուխտի վկայաբանությունը՝ նախ և առաջ հերոսուհու անվամբ, որ նշանակում է Սանի (Սանատրուկի) դուստր: Երկու վկայություններն էլ՝ Մծուրն մայրաքաղաքը և Սանդուխտ կույսը, Սանատրուկին ապահովապես տեղադրում են I դ. վերջերին: Այդ է պատճառը, որ պատմահայրը նրան հաջորդ է կարգել I դ. քրիստոնյա Աբգար արքային՝ դարձնելով նրան հակոտնյա և քրիստոնեության հալածիչ: Սրանով անուղղակի ձևով հավաստվում է, որ I դ. վերջերին հայոց մայրաքաղաք Մծուրնում եղել է քրիստոնյա համայնք: Անուղղակի ենք ասում, որովհետև այն, ինչ ասվում է Մծբնի մասին, հայագիտության մեջ ընդունված կարծիքի համաձայն, վերագրելի է Մծուրնին:

Մ. Խոսրենացու Մծբինը երբևէ Մծուրնի հետ չէր առնչակցվի հայագետների կողմից, եթե Սեբեոսի «Պատմության» մեջ չպահպանվեր «Նախնական Պատմության» հեղինակի անվան մյուս տարբերակը՝ Մարաբա փիլիսոփա Մծուրնացի, որից պարզ է դառնում, որ Խոսրենացու Մար Աբասը ոչ թե Մծբնացի, այլ Մծուրնացի է: Ճիշտ է, Սեբեոսը ևս շփոթում է երկու քաղաքները, բայց կա մի վկայություն, որ օգնում է տարբերակել Մծուրքը Մծբինից. «Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի» (Սեբ., էջ 53): Սրան հաջորդում է հայոց սահմանների թվարկումը, որից հետո Արշակը փոքր Արշակին ուղարկում է «ի Մրծանայ ընդ յարևմուտս...» (էջ 54), որ կարծես հուշում է, թե Արշակ Փոքրի նստավայր Մծբինը իրականում եղել է

Մծուրնը: Իսկ ահա քիչ հետո, հայոց և պարթևաց արքայացանկը ներկայացնելու ժամանակ, Սեբեոսը գրում է. «Արդ թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ յամի հարիւրերորդի քսան և իններորդի թագաւորութեան Արշակայ՝ հաւր իւրոյ ի վերայ Հայաստան երկրի ի Մրծուին քաղաքի...» (Սեբ., էջ 54): Այս վկայությունը ևս հաստատում է, որ թեկուզ Սեբեոսը չի գիտակցել, բայց նրա աղբյուրի հեղինակը՝ Մարաբր, շատ լավ տարբերակել է երկու քաղաքները: Եթե այդպես է, հարց է ծագում, թե ինչու առաջին թագավորի անունը նույն աղբյուրի երկու տարբերակներում տարբեր է. ըստ Մ. Խորենացու՝ Մար Աբայի՝ Հայքում թագավորում է Արշակ Պարթևի կրտսեր եղբայր Վաղարշակը, ըստ Սեբեոսի՝ Մարաբայի՝ Արշակ Պարթևի որդի Արշակ Փոքրը: Խնդիրը հետաքրքրական է նաև այնու, որ VI դ. հույն պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին, վկայակոչելով իր աղբյուրն իբրև «Հայոց Պատմություն», ըստ Ադոնցի, նկատի ունենալով Փավստոս Բուզանդին, գրում է, որ Հայքում Արշակունի առաջին թագավորը պարթևների արքայի եղբայր Արշակն էր: Ստացվում է, որ Պրոկոպիոսը, ուրույն տեղեկություն ունենալով, երկուսին էլ մասամբ նման է. մեկին՝ անունով, մյուսին՝ արենակցության բնույթով ([8], էջ 280): Ինչու է այդպես: Արդյո՞ք այն պատճառով, որ Մարաբ Մծուրնացու և նման հին աղբյուրներում Արշակ անունը գործածված է իբրև թագավորական տիտղոս՝ ընդունված վաղ Արշակունիների արքունիքում՝ իբրև մի ավելի հին ավանդույթից եկող տոհմական ժառանգություն: Հարցը որոշակի դրական պատասխան կարող է ստանալ, եթե հաշվի առնենք Մ. Խորենացու կողմից Վաղարշակին տրված ծագումը:

Այդ դեպքում օրինաչափ կլինե՞ր երկու և ավելի Արշակներին տարբերակել ըստ արենակցության աստիճանի կամ ըստ ավագության կարգի: Որտեղի՞ց այն հայտնվեց պատմահոր մտքում, չէ՞ որ երկու աղբյուր անվանում են Արշակ (Սեբեոս, Պրոկոպիոս): Բացատրության բանալին դարձյալ թաքնված է հորինովի Մծբնապատումի մեջ: Ըստ պատմահոր տրամաբանության՝ եթե մայրաքաղաքը Մծբինն է, Նինվե գործուղվողը ասորի դպիր Մար Աբասն է, ապա պատվիրատու արքան առաջին Արշակունին է Հայքում: Որպես այդպիսին, բնական է, որ նա կամենա իմանալ երկրի նախկին տերերի պատմությունը, ճանաչի այդ երկրի իշխանների նախնյաց գործերը: Ահա, առաջինը «Պատմություն» պատվիրողի ֆունկցիան. ըստ Խորենացու, հատուկ է առաջինը զսահակալողին. հետևաբար, եթե հայտնի է պատվիրատու արքայի անունը,

ուրեմն հայտնի է նաև առաջին գահակալի անունը: Հավանաբար «Հայոց նախնական պատմության» հեղինակ Մարաբ Մծուրնացու հիշատակարանային տեղեկության մեջ նշվում էր, որ իր գործի պատվիրատու-ստացողը Հայոց Վաղարշ թագավորն է, որը մինչև նոր մայրաքաղաք հիմնելը նստում էր Մծուրնում II դ. վերջերին: Սա այն Վաղարշն էր, որի օրոք հայոց գահը հռչակվեց տեղի Արշակունիների ժառանգություն, ուստի և օրինաչափորեն ծնվեց սեփական երկրի պատմությունն ունենալու պահանջ:

Արժե նշել, որ Վաղարշակին Խորենացու կողմից վերագրվում է ևս մի արարք, որ պատկանում է պատմական Վաղարշին: Դա հայոց գահը տեղական Արշակունիների ժառանգություն հռչակելն էր: Մ. Խորենացին գրում է. «Եւ քանզի բազում ունէր (Վաղարշակը – Ա. Ս.) ուստերս, պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին (կարդա՛ Մծուրք – Ա. Ս.) վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարոնոյ... Եւ միայն գառաջին որդին իւր... պահէ առ իւր... և զնորին ուստր... Եւ եղև այս յայնմ յետէ և առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց՝ միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն...» (Մ. Խ., II, գլ. C): Այստեղ ուշադրության արժանի է հատկապէս այն փաստը, որ ոչ թագաժառանգներին հատկացված տարածքը համարում է «արտաքոյ Տարոնոյ»: Ի՞նչ կապ ունի Տարոնը, եթե Մծբին քաղաքանվան փոխարեն չնկատենք Մծուրնը, որը գտնվում էր այն ժամանակ ոստանիկ համարվող Տարոնում:

Փաստորեն, թե՛ Խորենացին, թե՛ Սեբեոսը, Մծուրքի փոխարեն մայրաքաղաք համարելով Մծբինը, հակասության մեջ են ընկնում, երբ Մծբնի փոխարեն երբեմն նշում են Մծուրնը: Սեբեոսի դեպքում այդ ինքնահակասման օրինակը պարզ է և բերված է վերևում, իսկ Խորենացու դեպքում ինքնահակասման օրինակ գտնում ենք գահաժառանգի բնակեցման կարգում նշված «արտաքոյ Տարոնոյ» արտահայտության մեջ, որովհետև այդտեղ թաքնված է Մծուրքի հետքը: Որտեղից հիշյալ պատմիչների մոտ հայտնվեցին իրական Մծուրնի հետքերը: Սեբեոսի մոտ՝ Փալսատոս Բուզանդից, Խորենացու մոտ՝ թե՛ Փալսատոսից, թե՛ Մարաբ Մծուրնացուց:

Կարծում ենք, որ պատմահոր գիրքը ոչ թե կտուժի, այլ կշահի, եթե նրանում եղած «Մծբինը» կարդանք «Մծուրք», բացի մի քանի դեպքերից, որոնք վերաբերում են իսկական Մծբին քաղաքին, օրինակ, Հակոբ Մծբնացի.

պարսից կամ հունաց գորքերի կայանատեղ (Մ. Խ., II, գլ. 2Թ, III, գլ. Է, ԿԷ),
Եդեսիա տարվող Մծբնի կուտքեր (II, ԻԵ):

Այսպիսով, Վաղարշակ անունը համարելով Մ. Խորենացու
տրամաբանության պտուղ, դրա հետ համադրելով Հայքի առաջին
Արշակունի թագավոր Տրդատի պատմական անունը, կմնա ընդունել, որ
Սեբեոսի և Պրոկոպիոսի «Արշակը» տիտղոսային ծագում ունի: Իսկ թե որն է
ավելի նախընտրելի, որդի՞, թե՞ կրտսեր եղբայր, կարելի է ասել երկրորդը՝
հաշվի առնելով, որ իրական պատմական Տրդատի արյունակցությունը և
Խորենացու, Պրոկոպիոսի տվյալները վկայում են հոգուտ եղբոր:
Չմոռանանք, որ միջպետական պաշտոնական հարաբերությունների մեջ
կախյալ երկրի թագավորը սյուզերենին դիմում էր իբրև ավագ եղբոր կամ
հոր, բայց արդեն անկախ արյունակցությունից:

Դառնալով Մծուրքին՝ ասենք, որ պատմական այդ քաղաքի հիշատակը
մնացել է ոչ միայն նրա նշանավոր քաղաքացու անվան մեջ ու Փափստոս
Բուզանդի IV դարության ԺԴ գլխում, այլև ժողովրդական վիպական
ավանդույթում՝ իբրև «Սասնա Շռերի» տեղագրությունից հայտնի Մըսըր
քաղաք, Մըսրա Մելիքի նստավայր: Մըծուր>Մըսըր անցումը կարելի է
ենթադրել արաբական տիրապետության շրջանում՝ որպես օտար
ազդեցության արդյունք: Ինչպես Մծբին<Նիսիբին, Մուծածիր<Մուսասիր և
այլն: Իրոք, մի կողմից էպոսին հատուկ է նեղ տեղային աշխարհագրություն
պատմական անուններով, որքան էլ էպիկական գեղարվեստական
տարածությունը ներառի անորոշ ու հեռու վայրեր, որոնք ժողովրդական
վեպի պոետիկայում ունեն այլ ֆունկցիա: Էպոսագետները, անտեսելով
Մծուրք-Մըսըր նույնությունը, զուր ջանքեր են թափել Մըսըր քաղաքը
հեռավոր ափերում տեղադրելու (Մոսուլ, Մըսր=Եգիպտոս), փոխանակ այն
տեսնելու հենց Սասունի հարևանությամբ, որի հետ սահմանային կետ է
նշվում Բաթմանա կամուրջը (տե՛ս [9], էջ 520): Միանշանակ երևում է, որ
էպոսի ձևավորման փուլում Սասնա հարևանությամբ եղած Մըսրա Մելիքի
երկիրը բնակեցված էր արաբական ցեղերով, դրա համար էլ հակադրվել են
երբեմնի հայաբնակ երկու գավառներ՝ Սասուն և Մծուրք (=Մըսըր): Էական
պետք է համարել նաև այն փաստը, որ հակառակորդ երկիրը կոչվում է նրա
կենտրոնի՝ Մըսըր քաղաքի անունով, մի բան, որ նույնպես առնչվում է
Մծուրքի երբեմնի ունեցած փառքի հետ:

Այսօր այդ փառքը փլատակների տակից կարող է հառնել, եթե
Փափստոսի նշած վայրում կատարվեն հնագիտական պեղումներ, և եթե նրա

միակ հայտնի քաղաքացու՝ Մարաբի անձն ու գործը կարևորվեն ըստ իրական արժանիքների և ոչ թե ըստ կասկածամիտ հայազետների, ովքեր նրա մասին իրենց պատկերացումները ձևավորել են Խորենացու հանդեպ ունեցած վերաբերմունքի համաձայն:

...

Արդ, ո՞վ է Մարաբա փիլիսոփա Մծուրնացին կամ Մար Աբաս Կատինա Մծբնացին: Սեբեոսի մոտ նա հիշատակվում է մեկ անգամ, այն էլ հիշատակարանային նախաբանում: Մեջբերումը կատարվում է ըստ մեր վերակազմության. «Անդ նայելով ի մատենաս Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացոյ, զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն կամեցայ ձեզ գրուցակարգել զամս (և զաւուրս հինգ)՝ թագաւորացն Հայոց և Պարթևաց, զոր [ոմն ի նոցանէ] եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին քաղաքի, յապարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն: Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից և բացեալ զաւերածն վասն սեանցն՝ աստ դիպան արձանագրին՝ դրոշմեալ ի վերայ վիմի յունարեն դպրութեամբ, քանզի այս ունէր վերնագիրն այսպէս. «Ես՝ Ագաթանգեղոս գրիչ...» և այլն: Մատյանի հեղինակի անունը Սեբեոսը կիրառել է սեռական հոլովով, որի ուղղականը պետք է լինի Մարաբ փիլիսոփա Մծուրնացի: Ստ. Մալխասյանը Սեբեոսի Պատմության հրատարակությունն օժտել է գլխակարգումով, որտեղ I գլխի բովանդակությունը ներկայացրել է համառոտ բնութագրերով, որոնցից երկրորդը վերնագրել է այսպէս. «Մատենան Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացոյ»: Ստ. Մալխասյանը քանի որ հեղինակի անվան ուղիղ ձև է համարել Մարաբայ, ոչ թե Մարաբ, հետազոտողները մեխանիկորեն շարունակել են այդպէս էլ անվանել՝ չնկատելով, որ Սեբեոսի մոտ ծավալուն հատկացուցչի բոլոր երեք անդամներն էլ առնված են հոլովական համաձայնությամբ: Այսինքն, եթե անվան ուղիղ ձևը լինէր Մարաբայ, ապա եռանդամ հատկացուցիչը կլինէր Մարաբայի փիլիսոփայի Մծուրնացոյ:

Այժմ քննենք Մ. Խորենացու վկայությունները, որոնք թվով յոթն են, թեկուզ մեկը վերնագրային է:

* Գրչական հավելում ըստ հիշատակարանի I պարբերության, որ կարելի է որակել իբրև մեխանիկական կրկնություն:

1. «Եւ գտեալ զոմն ասորի Մար Աբաս Կատինայ, այր ուշիմ և վարժ քաղղեացի և յոյն գրով, զոր յդէ առ եղբայրն իւր Արշակ Մեծ արժանի ընծայիւք, բանալ նմա զղիւանն արքունի» (Մ. Խ., I, գլ. Ը):

2. «Եւ ընկալեալ Արշակայ Մեծի զգիրն ի ձեռաց Մար Աբայն Կատինայ՝ մեծաւ լրջմտութեամբ հրամայէ առաջի առնել նմա զղիւանն արքունի որ ի Նինուէ» (Մ. Խ., I, գլ. Թ):

3. «Յայսմ մատենէ Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւաստի՝ բերէ առ Վաղարշակ արքայ ի Մծբին յոյն և ասորի գրով: Զոր առեալ... Վաղարշակայ... դնէ յարքունիսն ի պահեստի... և զմասն ինչ յարձանի հրամայէ դրոշմել» (Մ. Խ., I, գլ. Թ):

4. «Բայց թեպէտ և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպէս Մար Աբաս Կատինայ պատմէ՝ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց» (Մ. Խ., I, գլ. ԺԴ):

5. «Այլ հաւաստի մեզ թուեցաւ որ ի Մար Աբայն Կատինայն է քննութիւն քաղղեական մատենից քան զայսոսիկ, քանզի ոճով իմն ասէ և զպատճառս պատերազմին յայտնէ» (Մ. Խ., I, գլ. ԺԸ):

6. «Աստանոր սպառին բանք ծերունւոյն Մար Աբայ Կատինայ» (Մ. Խ., II, գլ. Թ):

7. «Եթէ ուստի եզիտ զպատմութիւնն զկնի մատենիցն Մար Աբայ Կատինայ» (Մ. Խ., II գլ. Ժ):

Համեմատելիս հեշտ է նկատել, որ հատուկ անունը, երբ առնվում է ուղիղ ձևով՝ ուղղական կամ հայցական հոլովներով, ստանում է հունական – աս վերջավորությունը (N 1, 3, 4), իսկ երբ առնվում է սեռական հոլովով, հունական վերջավորությունը բացակայում է, և հատկացուցչային կապակցության միայն 2-րդ և 3-րդ անդամներն են հոլովով համաձայնեցվում (N 2, 5, 6, 7): Մինչդեռ սպասելի էր, որ սեռական ձևը լինէր Մարայ Աբայ Կատինայ: Մար ձևը, ուղիղ կիրառվելով, ասես հուշում է, որ այն Խորենացու աղբյուրում եղել է «Աբայ» անվանը միացած, ինչպես Սեբեոսի մոտ՝ Մարաբայ: Դրանով իսկ հաստատվում է, որ պատմահայրն ինքն է Մարաբ անունը վերլուծաբար մասնատել՝ ցույց տալու, որ դա ասորերեն Մար (Տեր) բառն է: Բայց եթե ընդունենք, որ Խորենացին դեռևս V դ. գրանցել է հոլովական անհամաձայնության դեպք, որպիսին կարող էր լինել, օր.՝ որոշիչը դրվեր ուղղականաձև, իսկ որոշյալը՝ սեռականաձև, ապա նման դեպքում սեռական հոլովից պետք է օրինաչափորեն ստանանք

ուղղականը, տվյալ դեպքում «Աբայ»-ից ենթադրվող միակ ուղիղ ձևն է Աբ, որը թեկուզ հեռանում է հայտնի «Աբա» բառից, բայց նույնպես հիշեցնում է «հայր» իմաստը: Եվ ստացվում է Տեր հայր, որ հատուկ անուն չէր կարող դիտվել: Բացառվում է նաև Աբաս անունը, որը գործածական է դարձել արաբական դարաշրջանում: Իրականում, ինչպես արդեն մեջքերվեց, Մարաբի անունով Խորենացուն հասած «Նախնական պատմությունը» եղել է հունարենով, որի հետքերը երևում են թե՛ Մարաբաս, փիլիսոփա բառերից և թե՛ այլ բնագրային նշաններից (օր. Կադմոս, Տիտան, Հաբեթոսթե և այլն): Ասորական հետքը գալիս է Մ. Խորենացու կողմից Մծբինը Մծուրնի հետ շփոթելուց, չնայած արևելագետ Ն. Մաոն էլ սեմական հետքեր է նկատել Մարաբայի սեբեոսյան տարբերակում ([10], էջ 289-290, 299): Վերջինիս ի պատասխան Ն. Ադոնցը գրում է. «Խոսում են Մարաբայի գրքի ասորական ծագման մասին: Այդ կարծիքը, ներշնչված փիլիսոփայի ասորական անունով, քիչ է համոզիչ: Այն աստվածաշնչային գծերը, որոնք մատնանշվում են, վաղուց են դադարել սոսկ ասորական գրականության ստացվածքը լինելուց: Եթե Մարաբասը կամ Կադմոսը ասորական անուններ են, բայց և այնպես նրանք հունականացված են» ([8], էջ 289):

Այսպիսով, հունական վերջավորությունն առանձնացնելուց հետո, երբ պարզվում է, որ հիմքում ասորերեն բառ հնարավոր չէ, մնում է անունը համարել հայկական, իսկ ավելի խորքում՝ իրանական. Մարաբ<Մերաբ<Մեհրաբ անցումներով (հմմտ. [11], հ. Բ, էջ 212 (Ձոհրաբ=կարմրաջուր, կարմրափայլ), հ. Գ, էջ 313 (Մեհրաբ=արև+ջուր, արևափայլ)): Այսինքն՝ պարզվեց, որ Խորենացու և Սեբեոսի ընդհանուր աղբյուրում եղել է նույն անունով դպիր նույն անձը՝ Մծուրնացի գրագիր Մարաբը: Սա եղել է, հավանաբար, արքունական դպիր, միջազգային լեզուների գիտակ և ստացել է հայոց նախնական պատմությունը գրելու պատվեր Մծուրնի արքունիքից, երբ թագավոր էր Վաղարշ II-ը:

Մատենադարան, Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Ա. Ա. Սահակյան

Մծուրք մայրաքաղաքը և պատմիչ Մարաբ Մծուրնացին

Մծուրքը արշակունյան Հայաստանի առաջին մայրաքաղաքն էր (Տարոնի գավառ) I դարի II կեսից մինչև II դարի վերջերը: Այն, ինչ գրում է Խորենացին

Մծբին մայրաքաղաքի մասին, պետք է վերագրել Մծուրնին: Մծուրնացի է առաջին «Հայոց պատմության» հեղինակ Մարաբը, ով իր երկը շարադրել է արքունիքի պատվերով Վաղարշ II-ի օրոք: Մծուրքի հիշատակը պահպանել են ոչ միայն Փավստոսն ու Սեբեոսը, այլև «Սասնա ծռեր» էպոսը՝ Սասունի հարևան քաղաքի և հակահերոսի անվանումներում (Մըսըր, Մըսրա Մելիք):

А. А. Саакян

Столица Мцурн и историограф Мараб Мцурнийский

Мцурк Таронской области являлся первой столицей аршакидской Армении со второй половины I в. до конца II в. Сведения о столице Мцбин, зафиксированные Хоренаци, следует отнести к Мцурну. Жителем Мцурна был Мараб, автор первой «Армянской истории», который создал свой труд по заказу царского двора при правлении Вагарша II. Мцурк упоминается не только у Павстоса и Себеоса, но и в эпосе «Сасна Црер»: в названии соседнего с Сасуном города Мсер и имени антигероя Мсра Мелика.

A. A. Sahakyan

The Capital of Mtsourk and Historiographer Marab Mtsournatsi

Mtsourk (the province of Taron) used to be the first capital of the Arshacid Armenia from the second half of the first century to the end of the second century. The information about the capital of Mtsbin (Nisibin) given by Movses Khorenatsi should be ascribed to Mtsourk. Marab, the author of the first book on the "History of Armenia", was of Mtsourk descent. He got the order to write this work from the court in the reign of Vagharsh II. Mtsourk is not only mentioned by Pavstos and Sebeos but also in the epic "Sasna Crer" ("The Daredevils of Sasoun") – in the names of Məsər, the town in the neighbourhood of Sasoun, and Məsra Melik, the hero's antagonist.

Գրականություն

1. *Մկրտչյան Ն. Семитские языки и армянский. Ереван. 2005.*
2. Հայկական Սով. Հանրագիտարան (ՀՍՀ), հ. 7, Եր., 1981; հ. 10, Եր., 1984:
3. *Աբգարյան Գ., «Սեբեոսի Պատմությունը» և Անանունի առեղծվածը, Եր., 1965:*
4. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Եր., 1979:
5. *Անանեան Պ., Սեբեոսի Պատմութեան գրքի մասին քանի մը լուսաբանութիւններ, Վենետիկ, Ս. Ղազար, 1972:*
6. *Թովհէան Յ., Սարիքաս, Արարատ, 1903, էջ 526-534.*

7. *Периханян А. Г.* Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I. Ереван. 1993.

8. *Աղոնց Ն.*, «Հայոց նախնական պատմությունը» Սեբեոսի երկում և նրա աղբյուրները Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկասիրությունների: Երկեր, հ. Բ, Եր., 2006:

9. «Սասնա ծռեր» (Ընտիր պատումներ), Աշխատասիր. և ողւս. թարգմ. Կ. Մելիք-Օհանջանյանի. Եր., 2008:

10. *Март Н.* О начальной истории Армении Анонима (К вопросу об источниках истории Моисея Хоренского) - «Византийский временник», 1894. Т. I. Вып. 2. С. 263-306.

11. *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944; հ. Գ, Եր. 1946: